ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

27 փետրվարի 2019 թվականի գյուղ Տեղ

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 9 անդամներից՝

Արտակ Աղաջանյանը
Գառնիկ Կարապետյանը
Համեստ Հակոբյանը
Արգամ Լալայանը
Նարինե Ջհանգիրյանը
Մասիս Մկրտչյանը
Սևադա Դանիելյանը
Սիլվա Գալստյանը

Բացակայում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

Սենիկ Փարսյանը

Մասնակցում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Նիստի արձանագրումն ապահովում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 14.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

Որոշեց (N 6)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի

Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 27-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 38-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:**
4. **«Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:**
5. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 13-ի N9-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
6. **<<Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից 2019 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:**
7. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն աճուրդով օտարելու մասին:**
8. **Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին:**
9. **2018 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին:**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N7)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետով, հիմք ընդունալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

3. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:**
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N8)՝

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝
   1) Տարեսկզբի մնացորդը՝ 25643,3 հազ. դրամ
   2) Եկամուտներ՝ 165464,5 հազ. դրամ
   3) Ծախսեր՝ 175414,8 հազ. դրամ
   4) Տարեվերջի մնացորդը՝ 15693,0 հազ. դրամ

2. Հաստատել բյուջեի տարեկան հաշվետվությունները համաձայն հետևյալ հավելվածների.
   1) Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ հավելված 1,
   2) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված 2,
   3) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 3,
   4) Համայնքի բյուջեի հավելուրդի կամ դեֆիցիտի՝ /պակասուրդի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված 4,
   5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված 5:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

4. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 38-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N9)՝

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրությունը՝ պաշտոնային դրույքաչափը սահմանել ամսական 290000 ՀՀ դրամ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 38-Ա որոշումը:
4. Առաջարկել Տեղ համայնքի ղեկավարին՝ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
5. Հաստիքացուցակի համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

5. **Լսեց՝ «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N10)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. մարտի 1-ից:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

6. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 13-ի N9-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N11)՝

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N9-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ որոշման N3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N3 հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. մարտի 1-ից:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

7. **Լսեց՝ <<Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից 2019 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N12)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Սահմանել <<Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից 2019 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

8. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն աճուրդով օտարելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N13)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Քարաշեն-Խնածախ չշահագործվող միջին ճնշման գազատարի խողովակները /նյութը՝ պողպատյա, տրամագիծը՝ 159 մմ, պատի հաստությունը՝ 4,5 մմ, երկարությունը՝ 4300 մ/ օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 1 գծամետրի համար 1936(հազար ինը հարյուր երեսուն վեց) ՀՀ դրամ (ըստ «Կալգարի» ՍՊԸ-ի կողմից ,,29,, հունվարի 2019 թվականին տրված հիմնական միջոցների շուկայական գնահատման հաշվետվության):
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

9. **Լսեց՝ Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N14)՝

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, հիմք ընդունելով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության գրությունը և հաշվի առնելով Տեղ համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխություններին, ըստ որի առաջարկվում է Տեղ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.06154 հեկտար, որից 0.02934 հեկտար (5 միավոր) վարելահող (կադաստրային ծածկագրեր՝ 09-101-0114-0013-ից, 09-101-0116-0011-ից, 09-101-0116-0014-ից, 09-101-0116-0016-ից, 09-101-0103-0018-ից/ և 0.0322 հեկտար (5 միավոր) այլ հողատեսքեր (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0104-0003-ից) փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<Էներգետիկայի օբյեկտների հողեր>> գործառնական նշանակությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով 110ԿՎ լարման օդային գծի հենարանների շինարարության համար:
2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

10. Լսեց՝ 2018 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկելու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N15)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2018 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1 արձանագրությունը, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն 2018 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարին՝ միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ N1 արձանագրությամբ նշված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ և վերջնական արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 8 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 16.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1 Արտակ Աղաջանյան
2 Գառնիկ Կարապետյան
3 Համեստ Հակոբյան
4 Արգամ Լալայան
5 Նարինե Ջհանգիրյան
6 Մասիս Մկրտչյան
7 Սևադա Դանիելյան
8 Սիլվա Գալստյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ ***Ներսես Շադունց***